

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2-2014 «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2014թ. ապրիլի 22-ին, տնօրենների խորհրդի անդամների հեռակա քվեարկության կարգով տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստը:

Նիստին մասնակցում էին տնօրենների խորհրդի անդամներ Սպարտակ Թևոսյանը, Վահրամ Բեգլարյանը, Կարեն Արաբյանը, Արա Ղոնյանը, Հայկ Բոյաջյանը և Ռաֆֆի Բալոզյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի հրավիրում:
2. «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի օրակարգը հաստատելու մասին:

Օրակարգի առաջին հարցով`

Առաջարկվեց հրավիրել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողով:

Քվեարկության արդյունքներով որոշվեց.

2014թ. հունիսի 2-ին, ժամը 11:00-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 26 հասցեում գումարել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:

Բաժնետերերի գրանցման ամսաթիվ և ժամ սահմանել 2014թ. հունիսի 2-ին ժամը 10:00, իսկ վայր` Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 26:

Բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել 2014թ. ապրիլի 23-ի դրությամբ ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Բաժնետերերի տարեկան ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցել էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում` ծանուցումը տրամադրել առձեռն կամ փոստով:

Հաստատել քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը:

Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:

Օրակարգի երկրորդ հարցով`

Առաջարկեց հաստատել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի օրակարգը` ընդգրկելով հետևյալ հարցերը.

1. Տարեկան հաշվետվությունների ներկայացում (զեկուցողներ - գլխավոր տնօրեն Վահրամ Բեգլարյան, տեխնիկական տնօրեն Արմեն Գասպարյան, ֆինանսական տնօրեն Ժան Հովհաննիսյան)
2. 2013թ. ընկերության ֆինանսական գործունեության վերաբերյալ Աուդիտորի եզրակացության ներկայացում (զեկուցող - «Ֆինտեխ Աուդիտ» ՓԲԸ տնօրեն Անիկ Մարտիրոսյան)
3. Ընկերության 2014թ. ֆինանսական գործունեության աուդիտորական կազմակերպության հաստատում (Ընկերության խորհրդի կողմից մրցույթում հաղթող է ճանաչվել «Ֆինտեխ Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերությունը)
4. Տարեկան հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը
5. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատում
6. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2013 թվականի գործունեության արդյունքներով շահույթի համամասնությունները հաստատելու մասին
7. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2013 թվականի գործունեության արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունում և տարեկան շահութաբաժինների չափի հաստատում
8. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի ընտրություն

Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:

Օրակարգի հարցով որոշումները ուժի մեջ են մտնում 2014թ. ապրիլի 23-ից:

Սույն արձանագրությունը կազմվել է մեկ օրինակից, հայերեն լեզվով, 2014թ. ապրիլի 23-ին, բաղկացած է 2 (երկու) թերթից:

Խորհրդի քարտուղար՝ _____ Դմիտրի Բեցկով